

**ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
**«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍՈՒՄ**  
**(Առաջին շրջան՝ 1898—1911)**

**ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

18-րդ դարավերջին և 19-րդ դարի սկզբներին հայ պարբերական մամուլի մի շարք օրգաններ իրենց հրատարակությունները նշանավորեցին հին գրականության ամենաբազմազան հարցերի մեկնություններով, 19-րդ տարիների և 20-րդ դարի սկզբների լույս ընծայմամբ: Այդ պարբերականներից առանձնանում են «Բազմավեպը», «Հանդես ամսօրյան», «Արարատը», «Բանասերը» և «Անահիտը»: Տարբեր ուղղություն և ծրագիր ունեցող այս հանդեսներում հին մատենագրության հարցերը, բնականաբար, տարբեր պատասխան ու մոտեցում են ծնում, լուսաբանվում ու գնահատվում տարբեր տեսանկյուններից: Բացառությամբ «Անահիտ» հանդեսի, մյուս պարբերականներում հարցի ուսումնասիրությունը սահմանափակվում է գերազանցապես գիտական, պատմաբանասիրական հարցասիրությունների շրջանակներում: Դրանք կամ պատմիչների գործերի քննական ծանրակշիռ հետազոտություններ են (ինչպես՝ «Արարատում»), զանազան թղթերի մեկնություններ, «ձեռագրական սրբագրություններ» («Բանասերում»), կամ հեղինակային հարցի և ժամանակագրության բանասիրական ճշգրտումներ («Հանդես ամսօրյայում») և այլն:

Նկատենք նաև, որ «Բազմավեպը», «Հանդես ամսօրյան» և «Արարատը» ունեին չափավոր-պահպանողական ուղղություն, ուրիշ խոսքով՝ «վաճակաճար հրատարակություններ» էին: Հասկանալի պատճառներով «Բազմավեպի» էջերում սովելի հաճախ խոսք է լինում իր խկ՝ Մ. Պոտուրյանի պարբերացմամբ, ոչ թե «ժողովրդական», այլ «միջին դարու հայ կրթական բանաստեղծության» շուրջ<sup>1</sup>: Ազատամիտ քերթվածներից երբեմն վաճակաճար հրատարակության սրբագրվում էին «անամոթխած» հատվածները: Մոռացության միջից լույսի քերված միջնադարյան քնարերգության գեղեցիկ հայտնությունները տպագրվում էին առանց լայն ծանոթության ու վերլուծության, առանց գեղագիտական արժեքավորման: Միջնադարյան հայ պոեզիայի գեղեցկագիտական ընկալումը, առավել ևս, գրական-պատմական ընթացքի վրա նրա ունեցած իրական նշանակության արժեքավորումը ոչ միայն անհարիր էր այդ հանդեսների պահպանողական հայեցողությանը, այլև դուրս էր նրանց նպատակներից ու խնդիրներից:

Այլ է «Անահիտ» հանդեսի մոտեցումը: Այն հայոց հին մատենագրությունը քննում ու գնահատում է դարասկզբի արևմտահայ իրականության առաջադրած հարցերի և ազգային գրականության հետաճարների տեսանկյունից՝ քննորոշելով հին գրականության և՛ իմացաբանական (պատմական-ճանաչողական), և՛ գեղարվեստական արժեքը: Հանդեսի ծրագրային դրույթներում առանձնանում և ընդգծվում է երկու հիմնական միտում: Մի դեպքում՝ դարերի մոռացությունից վեր հանելով անցյալի արժեքները, դրանք ժողովրդականացնելով, հանդեսը միտում է հայ ժողովրդին ճանաչել տալ իր իսկ ստեղծածը, նրա մեջ արթնացնել ազգային ինքնության զգացումը և ինքնաճանաչողության միջոցով, արյան ու կոտորածի այդ օրերին հավատ ներշնչել ժողովրդին իր ուժերի նկատմամբ, «որովհետև ոչինչ այնքան կզորացնե ու կը մշտնջենավորե ազգի մը սերն ու համարումը՝ ինքն իր մասին, հետևաբար և իր ինքնապահպանությունը, որքան իր ոչ-շովիճական, այլ առողջ, լուսավոր ու համոզված հիացումն ու սերը իր քաղաքակրթական, գեղեցկագիտական ձիրքերուն նկատմամբ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Մ. Պոտուրյան, Միջին դարու հայ կրթական բանաստեղծությունը, «Բազմավեպ», Վենետիկ, 1905, թիվ 12, էջ 556:

<sup>2</sup> «Անահիտ», Փարիզ, 1905, թիվ 10—11, էջ 201 (այսուհետև հանդեսի տարբերիվը, համարը և էջը կտրվի տեքստում):

Մյուս դեպքում՝ ձգտում կար հին գրականության գեղագիտական արժեքավորմամբ արդի հայ գրականությունն ու գեղարվեստը հարստացնել հայադրոշմ և ինքնահատուկ այն տարրերով, որոնցով այնքան հարուստ է մեր հնոց ժառանգությունը: «Մեր վաղվան գրականությունը,—բացատրում է «Անահիտը»,— գեղային գույնով շատ ավելի ճոխ ու հզոր պիտի ըլլա, շատ ավելի ազգային ինքնատիպություն պիտի ունենա քան այսօրվան մեր գրականությունը» (1905, թիվ 10—11, էջ 203):

Երկու դեպքում էլ նպատակը մեկն է. նպատակը ազգային զարթոնքին, հայոց դատի պաշտպանությանը:

«Անահիտ» հանդեսը չի խորանում բանասիրական մանրամասների մեջ, չի ջանում հատկապես պարզել այս կամ այն բնագրի գրության թվականը, երբեմն նաև՝ հեղինակի հարցը: Դա հանդեսի համար առաջնային խնդիր չէ: Ա. Չոպանյանը, որ հին գրականության շուրջ «Անահիտում» տպագրված նյութերի միակ հեղինակն է (սանձանք բացառությամբ), մի առիթով խոստովանում է, որ հին դպրության և միջնադարյան մատենագրության ուսումնասիրման գործում ինքը «գիտական» աշխատանք չէ, որ կատարում է: «Անոր մեջ տիրապետողը,—ասում է նա,— գեղեցկագիտական զգացումը, արվեստագետի հոգին է. բանասիրական հարցերու վրա խոսած ատենն իսկ հաճախ գեղեցկագիտական տեսակետն է, որ զանոնք կը նկատեն» (1903, թիվ 3, էջ 215): Եվ այսպե՛ս «Ես բանասեր չեմ, գրականության մարդ եմ»<sup>3</sup>: Հենց այս հանգամանքը նկատի ունեն արևմտահայ գրականության պատմագիրը՝ Հ. Օշականը, երբ իր «Համապատկեր»-ում գրում էր. «Բնագիրներում վերլուծման մեջ Չոպանյան կարկառուն շնորհներ երևան չբերավ. բայց ըրավ ավելին: Այդ բնագիրներում տակ թաքնված հոգին էր, որ քակեց ու նետեց մեր վայելումին»<sup>4</sup>:

Չոպանյանի «Անահիտը» անդրադառնում է անցյալի մատենագրության հանիրավի մոռացված, բայց և նշանակալից երևույթներին ու խնդիրներին, միջնադարյան պոեզիայի հեղինակավոր դեմքերին՝ Գր. Նարեկացուն, Հովհ. Պղոս Երզնկացուն, Ֆրիկին, Կ. Երզնկացուն, Ա. Սյունեցուն, Ն. Քուչակին, Ե. Քեմսյուրյանին և այլոց:

Հանդեսի գրական-գեղարվեստական համակարգում ուրվագծվում է մի շատ հետաքրքրական և կարևոր երևույթ, ուշագրավ գեղագիտական հայացք: Հին գրականության ողջ ընթացքը հանդեսը նկատում է որպես պատմական միջավայրի, ժողովրդի հոգեբանության և ազգային խառնվածքի արտահայտության օրինաչափ թելադրություններով զարգացող գրական գործընթաց, որի գեղարվեստական համաձույլ տրվածքում մի կողմից խորանում է աշխարհիկ զգացումների, իրական կյանքի պատկերումը, մյուս կողմից էլ ընդգծվում ազգային քնավորության մեջ ձևավորված գծերի, բուն «հայկական գեղեցկագիտության» հոսքը գրականություն: Իրենց հերթին, ազգային-հայրենասիրական գաղափարաբանության և հայկական խառնվածքի հայտնությունները, գրական-պատմական ընթացքի զարգացման տեսակետից, դիտվում են իբրև աշխարհիկ ոգու գեղարվեստական դրսևորումներ:

Հողվածներում արտահայտված առանձին մտքերից պետք է ենթադրել, որ «Անահիտը» հայ հին մատենագրությունը ստորաբաժանում է պատմական երկու ընդհանուր հատվածների՝ հեթանոսական շրջանի անգիր գրականություն կամ ուղղակի՝ հեթանոսական բանաստեղծություն և քրիստոնեության մուտքից հետո ստեղծված գրականություն: Վերջինս էլ պարբերացվում է՝ դասական (կամ դասական հայերենով) գրականության և «աշուղական լեզվով բանաստեղծության»: Հին գրականության շրջանաբաժանման հարցում հանդեսը ելնում է գրականության ընդհանուր զարգացման բնույթից: Ըստ որում՝ հիմք ընդունելով լեզվի (իբրև գեղարվեստական ձևի) և բովանդակության միասնական շրջափոխության փաստը, 13-րդ դարը հանդեսը համարում է գրական-պատմական մի ժամանակահատված, երբ մի կողմից ծայր է առնում «աշխարհաբարի» (միջին հայերենի), իբրև գրական լեզվի, սկզբնավորումն ու զարգացումը և մյուս կողմից՝ ընդլայնվում գրականության բովանդակության աշխարհականացումը: «Աշուղներու երգերը,— կարդում ենք «Անահիտում»,— որոնց՝ ԺԳ. դարեն սկսյալ՝ մտույզները մեզի հասած են, ապացուցին թե պաշտոնական մատենագիրներում «վանական» գրականության ներքև՝ «ժողովրդական» ազատ գրականություն մը, կյանքե իրան և կյանքը երգող գրականություն մը արդեն ծայր տված էր... Գըրաբարին և հին գուտ-կրոնական գրականության մահն է որ կը սկսի այդ պահում և աշխարհաբարի կանգումն իբր գրական լեզու, աշխարհիկ զգացումները, ազատ ներշնչումները կ'երևան բանաստեղծության մեջ, կը թափանցին նույնիսկ եկեղեցական քերթողներն

<sup>3</sup> Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթ. 285, վավ. 16ա.

<sup>4</sup> Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 340:

դմանց գրությանց մեջ, հետո՝ գրեթե անխառն կը տիրափայլին Քուչակին և իր հաջորդներուն սիրերգներուն մեջ» (1905, թիվ 1, էջ 4):

Հայ դասական պատմագրությունը հանդեսը դիտում է մեր հին գրականության անբաժան մասը և առաջարկում մոր մոտեցմամբ արժեքավորել այն՝ Խորենացու, Եղիշեի, Փավստոսի, Լաստիվերտցու մեջ պատմագիրն «անջատել» արվեստագետից և «գրականորեն» ուսումնասիրել նրանց գործը: «Հայ պատմագիրներն ոմանք ճշմարիտ քերթողներ են,— կարդում ենք հանդեսում,— ինչպես Եղիշեն որում վարդաճանց պատմությունը տեսակ մը միստիքական յլուցագներգություն է» (1903, թիվ 2—3, էջ 43): Խորենացին մույնքան արվեստագետ-գրող է, որքան պատմագիր, Փարպեցին՝ լուրջ ու վեհագի պատմող, Լաստիվերտցին՝ հզոր եղերերգակ (տե՛ս 1903, թիվ 9, էջ 193):

«Անահիտի» էջերում հետազոտության հիմնական առարկա դարձավ աշուղական քանաստեղծությունը, որովհետև հենց այստեղ ամենից ավելի ակնհայտ կերպավորում են առեղ վերն հիշված գեղագիտական զուգորդումները:

«Աշուղական լեզվով քանաստեղծության» «բուն, ուժեղ և լուրջ սկզբնավորությունը» «Անահիտը» համարում է 13-րդ դարի վերջը և 14-րդ դարի սկիզբը, իրեն ժամանակակից-հիմնադիրներ թվելով Հովհ. Պլուզին, Ֆրիկին և Կ. Երզնկացուն:

Բանասիրական նյութի պակասը, աղքատիկ տեղեկությունները, իհարկե, հնարավորություն չէին տալիս ժամանակագրական առումով ճշգրտորեն որոշելու Հովհաննես Պլուզ քերթողի տեղը 13—14-րդ դարերի հայ պոեզիայում: Մինչև վերջերս էլ 13-րդ դարի հայ քանաստեղծությունը բացվում էր ոչ թե նրա, այլ Ֆրիկի ստեղծագործությամբ: Այս հարցի գիտական-քանասիրական վերջնական լուծումը տվեց Արմենուհի Սրայանյանը<sup>5</sup>:

Ի՛նչն է սակայն ուշագրավ: Ա. Չոպանյանը հակված էր ժամանակագրական առումով ընդունելու Հովհ. Երզնկացու առաջնությունը: Իր կազմած «Հայ աշուղներ» ֆրանսերեն ծաղովածուում<sup>6</sup> նա Հովհաննես Երզնկացուն դնում է Ֆրիկից և Կ. Երզնկացուց առաջ, թեև ինչպես հետագայում խոստովանում է, «առանց որևէ ապահովության» (1906, թիվ 6—7, էջ 108): Նույն ծողովածուում, սակայն, Պլուզին հաջորդում է Կ. Երզնկացին: «Անահիտի» 1906 թ. թիվ 6—7-ում տպագրված «Հովհաննես Երզնկացի» դիմանկար-ակնարկում («Դեմքեր» համատարիտղոսով) Պլուզին, Ֆրիկին և Քուչակին վերագրվող խրատական տաղիկների իմաստի և ձևի մանուկությունը Չոպանյանը հարցադրում է ոչ միայն ծողովրդական առածների, ասացվածքների օգտագործմամբ: Նա ենթադրում է, որ դրանք «է՛ն առաջ» խմբագրվել են մեկ անձի կողմից: Ո՛վ է այդ անձը՝ Քուչակը, Պլուզը, թե՛ Ֆրիկը: «Ավելի քան հավանական է որ Պլուզ և Ֆրիկ ավելի հին են քան Քուչակը, կը մնա գիտնալ ուրեմն թե այդ երկուքն՝ որ ժամանակակից են՝ ո՞րն է բուն հեղինակը այդ տաղիկներում»: Եվ ապա՝ «Հավանակագույն է Պլուզ» (1906, թիվ 6—7, էջ 133):

Ա. Չոպանյանը Հովհ. Երզնկացուն համարում է 13-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ: «Հովհաննես Երզնկացի» գրական ակնարկը (որ քանաստեղծին նվիրված միակ գլուխվածքն է «Անահիտում») իհարկե միտում չունի ճշտելու քննվող հարցը, ոչ էլ մանավանդ քննելու հեղինակի ստեղծագործական վաստակը: Այն, ամենաընդհանուր ուրվագծումներով, «Անահիտի» ընթերցողին է ներկայացնում Հովհ. Պլուզ վարդապետ Երզնկացու՝ հայ հին գրականության ամենաառաջնակարգ դեմքերից մեկի կյանքն ու գործը: Իսկ այդ գործը քավականին հարուստ է՝ իմաստասիրական ու մեկնողական ինքնագիր, թարգմանական էջեր, ճառեր, շարականներ, վանական կյանքի կանոնագրություններ, տաղեր և այլն: «Անահիտի» համոզմամբ՝ իր քերթողական էջերով Պլուզը «պատվավոր տեղ ունի» հայ տոհմիկ քանաստեղծության մեջ, «իսկ իբր հմուտ գրագետ առաջինն է իր ժամանակին և Մին մեծագույններեն Հայոց ամբողջ հին գրականության» (1906, թիվ 6—7, էջ 137):

Աշխարհիկ քանաստեղծության զարգացման գործում վճռական դեր է վերապահվում Կ. Երզնկացուն: Այս մոտեցումը հանդեսը հիմնավորում է Կ. Երզնկացու պոեզիայի գաղափարական ու գեղարվեստական բնորոշ առանձնահատկությունների մեկնությամբ: Այն շատ կողմերով հատկանշում է «Անահիտի» գրական քաղաքականությունը ընդհանրապես և հին գրականության նկատմամբ նրա վերաբերմունքը՝ հատկապես:

Հանդեսը վերլուծության սկզբունք է ընդունում՝ առաջին. գրականության ժողովրդապայմանը, որ տվյալ դեպքում ժողովրդի հավաքական նկարագրի, ազգային բնավորության յուրահատուկ գծերի գեղարվեստական բարձրարվեստ կերպավորման և գրականության բովանդակության աշխարհականացման, ժողովրդին հասկանալի լեզվով և ժողովրդին հուզող բաներից գրելու իրողությունն է:

Նախ, հավանական է համարվում, որ «աշուղական լեզուն գրական լեզվի բարձրագ

<sup>5</sup> Տե՛ս Ա. Սրայան, Հովհաննես Երզնկացի, Եր. 1958, էջ 27—30:

<sup>6</sup> A. Tchobanian, Les Trouveres armeniens, Paris, 1906:

ճելու առաջին ձեռնարկողը» Կ. Երզնկացիին է: Եվ ի՞նչն է հատկանշական: Հանդեսը փորձում է այս միտքը հաստատել ոչ միայն այն իրողությամբ, թե Երզնկացիին «ոսմկական լեզվով գրած է իր բոլոր քերթվածները (բաց ի մեկ հատեն...)», այլև նրանով, որ Կոստանդինը, ավելի քան Հովհ. Պուլզը և Ֆրիկը, մոտ է կանգնած ժողովրդին, ավելի լավ է ճանաչում նրա կյանքն ու հետաքրքրությունները և ավելի խորն է ընկալում ժողովրդի հոգեբանությունը: «Կոստանդին, ամենն քիչ հմուտը՝ երեքեն ամենն մոտիկը ժողովրդին, ամենն ավելի կոչված ըլլալու էր ժողովրդին լեզուն ու բանաստեղծական ճաշակը դասականացնել փորձելու» (1906, թիվ 6—7, էջ 103): Նախորդ դարերում, Երզնկացուց և Ծնորհայուց էլ առաջ ստեղծագործող «աշխարհական աշուղների» մասին «Անահիտում» ուղղակի ասվում է, որ դրանք «ժողովրդին զգացումները կ'երգեին ժողովրդին հասկանալի լեզվով»:

Ապա, դիտվում է, որ Երզնկացու պեզիան իր ակունքներով մեծապես կապվում է հայ ժողովրդական բանավեստին: «Ինչ որ Կոստանդին լավ գիտցած ըլլալու է,— հաստատում է Չոպանյանը,— Հայոց ժողովրդական բանաստեղծությունն է, այդ վաճառակնը մին եղած է առաջիններեն, եթե ոչ առաջինը, որ գրեթե վար իջած ու ժողովրդին հոգին արձակվող ձայնին ակնն է դրած... Կոստանդին Երզնկացիի բանաստեղծությունը թաթափված է, այդ մասին տարակույս չկա. «ժողովրդական» գեղեցկագիտության ներգործությամբ» (1906, թիվ 6—7, էջ 102, 103, 104):

Այստեղ արդեն որոշարկվում է վերլուծության երկրորդ գեղագիտական սկզբունքը՝ գրական դաստիարակությունը: Երզնկացին, անշուշտ, օգտվել է հայ ժողովրդական բանաստեղծությունից, հատկապես սիրո երգերից, կարդացել է հայ եկեղեցական բանաստեղծության «զլխավոր էջերը»: Բացի այդ, Չոպանյանը հիշեցնում է Երզնկացու սիրերգներից մեկի վերջին քառատողը.

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,  
Աշխարհի բան ուզեն գրով,  
Նայես վասն այն հայտնի ձայնով  
Սիրու բաներս ասցի հողով:

Եվ ապա բացատրում, որ «հայտնի ձայնով» նշանակում է «ծանոթ եղանակով», ոճով, տաղաչափությամբ: Հետևաբար եղել է աշուղական հայտնի դպրոց, գրական հոսանք, ուղղություն: Այնպես որ Երզնկացին շարունակում է իր անմիջական նախորդների ավանդները, բարեկամների խնդրանքով «աշխարհի բան» հորինում գրով (1906, թիվ 6—7, էջ 104):

Կ. Երզնկացին ծանոթ էր նաև պարսկական և արաբական բանաստեղծությանը, որի ազդեցությունը, սակայն, ըստ Չոպանյանի, ձևական-տաղաչափական նմանությունից այն կողմ չի անցնում և այն էլ միայն «Ծահնամեի ձայնով» գրված «Բանք հաղագս անցավոր մեծության» քերթվածում: Եվ եթե Երզնկացու տաղերում միստիկ-թախտոտ իմաստասիրության զուգորդումը հելլենական գեղեցկագիտությանը կամ դրա արտահայտությունը զվարթ քնարերգությամբ, քնորոշ էր ընդհանրապես վերածննդի գրականությանը, ապա՝ ինքնաբերական պարզությունն ու անկեղծությունը զուտ հայկական քնարության ու խառնվածքի արտահայտությունն էին: Կ. Երզնկացու տաղերը, համեմատելով Պետրարկայի, Դանթեի, Ֆիրդուսու, Վիլյոնի ստեղծագործությունների հետ, «Անահիտը» հայ բանաստեղծի քերթվածներում առանձնացնում և շեշտում է այս հատկանիշները:

Հանդեսի նույն փաստարկումներում առաջ է մղվում մեկ այլ, նույնքան ուշագրավ միտք՝ Կոստանդին Երզնկացու պեզիան միանգամայն ինքնուրույն, հայկական երևույթ է: Այն ինքնուրույնաբար ծագել է հայ հողի վրա, սնվել հայկական բանաստեղծության ավանդներով:

Եվ վերջապես, երրորդ սկզբունքը՝ բանաստեղծի անհատականությունը: Կ. Երզնկացու բանաստեղծությունը մարդկային հոգու ծանր ու տառապալից երկունքի արգասիք է, միաժամանակ՝ բանաստեղծ խառնվածքի հայտնություն և հոգու շնորհ: Նրան հալածել և չարախոսել են «նախանձոտները» («Ռմանք չար են հետ ինձ, և նախանձով են հիմ վերայ...»): Այդ տառապանքը ծնունդ է տվել մի քանի գողտրիկ էջերի: Այստեղ արդեն Չոպանյանին հետաքրքրում է բանաստեղծի «թիփը», «հոգեկան դիմագիծը»: Կ. Երզնկացին, ըստ Չոպանյանի, ունի «ներշնչյալ խառնվածք մը» և անպայման՝ տաղանդ: «Ինքն իսկ կ'ըսե զայդ... աչ է աշխատիւն և այլ է շնորհն ի հոգվույն»: «Հոս «հոգին» Երրորդության երրորդ անձն է,— մեկնում է Չոպանյանը,— բայց բանաձևը շատ ավելի լայն նշանակություն մը ունի և ճշմարիտ է քոլոր դարերուն և քոլոր արտադրողներուն համար... Կարդալով, ուսումնասիրելով, հմտություն ամբարելով՝ մարդ բանաստեղծ ըլլար, եթե չունի շնորհը հոգ-

վում, այսինքն բնածին հանճարը: «...Կոստանդին ուներ հանճար» (1908, թիվ 6—7, էջ 102):

«Անահիտում» նույն մոտեցմամբ են արժեքավորվել նաև մյուս հեղինակների ստեղծագործությունները: Մ. Խորենացու հարցում հանդեսն ընդօժիմ էր ազգային-հայրենասիրական զգացման վառ դրսևորումը, Նարեկացու «Մատյանում» և տաղերում՝ քնիկ հայկական ոգին, «Պլուզի քառյակներում»՝ «լուրջ ու հստակ մտածումը», Ֆրիկի երկերում՝ աշխարհայեցողության լայնությունը, բողոքական ոգու մեծությունը, «Ռուչակի հայրեններում» պարզությունն ու անկեղծությունը («անկեղծ» շեշտը... որ «հայկական» շեշտն է...»), Սյունեցու «Աղամագրքում»՝ բանաստեղծական երևակայությունը և այլն:

Հին գրականության արժեքները «Անահիտի» էջերում, փաստորեն, քննվում ու գնահատվում են գեղագիտական այն նույն սկզբունքներով, ինչպես որ հանդեսի էջերում վերլուծվում ու գնահատվում են վարուժանի, Սիամանթոյի, Թեքեյանի ստեղծագործությունները: Սա ըստ էության նոր հայացք էր անցյալի գրական ժառանգության գնահատման հարցում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հանդեսի հոդվածները լայն արձագանք էին գտնում գրական շրջաններում, խրախուսում և առաջնորդում միջնադարյան հայ պոեզիայի ուսումնասիրությունը:

Այսպես, Ֆրիկի անձնավորության ու գործի նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես «Անահիտի» 1905 թ. 1-ին համարում տպագրված «Կայծ մը» հոդվածից հետո: Մինչ այդ Ֆրիկի մասին արդեն գրվել էր և՛ պարբերական մամուլում, և՛ առանձին ժողովածուներում: Դրանք, սակայն, բանասիրական ծանոթագրումներ էին, համառոտ տեղեկություններ հեղինակի ձևազարդի մասին: «Անահիտի» էջերում «Գանգատ» բանաստեղծության վերլուծությանը Ա. Չոպանյանը մեկնում է Ֆրիկի աշխարհայեցողության քննորոշ կողմերը, բանաստեղծական արվեստի առանձնահատկությունները, պարզում բողոքող, համարձակ, քայց և տառապող ու անհունորեն դժբախտ բանաստեղծի գեղարվեստական հարուստ տարերքը: Ֆրիկը հայտնագործվում է նորովի, դրվում միջնադարյան հայ գրականության մեծերի կողքին: Ա. Չոպանյանը մտադիր էր հավաքել և առանձին գրքով լույս ընծայել Ֆրիկի տաղերը: Սակայն, ընդառաջ գնալով Տիրայր վարդապետի (որն ի դեպ Ֆրիկի ժառանգության ուսումնասիրությանը սկսել է զբաղվել Չոպանյանի խորհրդով) ցանկությամբ, այդ գործն ամբողջությամբ թողնում է նրա հայեցողությանը: Եվ անշուշտ, իզուր էր «Թիրակի» քննադատը փորձում իր ընթերցողներին համոզել, թե Չոպանյանի «Նոր գյուտը Ֆրիկը չարդարացներ», թե՛ «Ֆրիկի գանգատը... գուրկ է ունե արժեք և շահեկանությունն, ու քննվ արժանի իր մոռացումի փոսեն դուրս հանելու»<sup>7</sup>:

«Բազմավեպը» 1886 թվականին, խոսելով Հովհ. Երզնկացու և Խ. Կեչառեցու մասին, մեկ-երկու նախադասությամբ անդրադառնում է Կ. Երզնկացուն: Հանդեսի հաջորդ համարներում տպագրվում են նրա քերթվածներից չորսը՝ «Բանք հաղագս անցավոր մեծության», «Սեր և առավոտ», «Բանք հաղագս արդարության» և «Գարուն» (վերջինիս վերնագիրը հետագայում Չոպանյանն է ավելացրել): Նույն տաղերը վերահրատարակվեցին «Անահիտի» 1905 թ. 5-րդ համարում, հետևյալ մեկնությամբ. «Մեր բոլոր գրական հավաքածուներում մեջ, որոնք արդեն այնքան տեսակետներով պակասավոր են,— ինչպես և աշուղական մեր հին գրականության մասին ուսումնասիրությանց մեջ,— Կոստանդին Երզնկացիի անունը չի հիշեցված երբեք իբրև կարևոր անուն մը: Այդ չորս կտորները, զոր կը վերատուրպենք այսօր «Անահիտի» մեջ, պիտի կարդացվին ինչպես անտիպ էջեր»: «Երզնկացին,— շարունակում է «Անահիտը»,— մեր գրականության մեջ իր որոշ և -լուսապայծառ- տեղը ունի, անոր «Գիրքը» պետք է ունենանք» (1905, թիվ 5, էջ 98):

1905-ի վերջերին Մխիթարյան միաբանության հեղինակավոր քանասեր Մ. Պոտուրյանի ջանքերով հրատարակվում էր Կ. Երզնկացու «Գիրքը»: Եվ ի՞նչն է հատկանշական: Պոտուրյանը, իր իսկ խոստովանությամբ, ոչ միայն Կ. Երզնկացու, այլև ընդհանրապես «մեր միջիմ դարու բանաստեղծներու ուսումնասիրությանը» հիմնավորապես սկսել է զբաղվել Չոպանյանի խորհրդով<sup>8</sup>: Հ. Պոտուրյանին մեծապես ոգևորել է Ա. Սյունեցու «Աղամագրքի» երրորդ հրատարակության (որի խմբագիրն ու հրատարակիչը ինքն էր) առիթով «Անահիտում» տպագրված հոդված-գրախոսականը: Գրքի նախորդ երկու հրատարակություններն անցել էին անարձագանք: Նոր մեկնությամբ անհրաժեշտ էր դարձանել այդ «մոռացումը»: «Անահիտի» «Գրական քրոնիկը» ծառայեց այդ նպատակին: Ա. Սյունեցու գործը առաջին անգամ վերլուծվեց իբրև գեղարվեստական ստեղծագործություն: Սյունեցու «հավերհապես անհավասար» էջերում «Անահիտի» քննադատն առանձնացնում է այն հատվածները, տո-

<sup>7</sup> Տե՛ս Տիրայր Արքեպիսկոպոս, Ֆրիկ, Դիվան, Նյու Յորք, 1952, էջ 15:

<sup>8</sup> «Թիրակ», Ալեքսանդրիա, 1905, թիվ 2, էջ 158:

<sup>9</sup> Տե՛ս «Նավասարդ», Պուրքեշ, 1925, էջ 25:

ղերն ու պատկերները, որոնցում ամբողջ իրությամբ դրսևորվում էր վիպերգու-բանաստեղծի յուրօրինակ տաղանդը: «Առաքել Սյունեցին,— կարդում ենք քրոմիկում,— մեր միջնադարյան գրականության առաջնակարգ դեմքերեն մին է...,— այդ մտայն, դաժան բարբարոս, անճաշակ, միամիտ ու խառնաշփոթ բանաստեղծի մեջ, հանճարի լույսը կը փայլի մերթ, ամենն թանկագինը լույսերեն, որ շատ հաճախադեպ չէ մեր հին գրականության մեջ» (1908, թիվ 1—4, էջ 1, 10):

Նահապետ Քուչակի մասին շատ է գրվել «Անահիտում»՝ հողվածներ, ուսումնասիրություններ, գրախոսականներ, կարծիքներ, հայրենների տեքստային ծանոթագրումներ, դիտողություններ և այլն: Հանդեսում տպագրվել է նաև 1902-ին Չոպանյանի հրատարակած «Քուչակի Դիվանը» գրքի առաջաբան-ուսումնասիրությունը: Հայտնի է, որ հայ գրասեր հասարակությունը առաջին անգամ այդ գրքով ճանաչեց ու գնահատեց Քուչակի պոեզիան, և մեզանում դրանով հանրածանոթ դարձան քուչակյան հայրենները: «Անահիտում» տպագրված հողվածներում Չոպանյանը քննադատի նրբազգաց ու խոր դատումով մեկ անգամ ևս հավաստում է Քուչակի բանաստեղծության մեծ արժեքը, նրան հատկացնում միջնադարյան հայ գրականության մեջ «այն տեղը—ամենաբարձր—որում իրավունք ունեն... իր հետ բաղդատվելու արժանի ունենալով միայն Գր. Նարեկացին» (1902, թիվ 6, էջ 118—119):

«Անահիտ» հանդեսին մեծ չափով հետաքրքրել է հայ հին գրականության թեմատիկ-ժանրային կառուցվածքի և բազմազանության հարցը: Հանդեսն անկեղծ ցավով է արձանագրում, որ մեզանում զգալի է իմաստասիրական, դյուցազնական ու բանագործական (սյուժետային բանաստեղծություններ, տաղաչափված վիպակներ և այլն) նկարագրով էջերի պակասը: Եվ միաժամանակ ավելացնում, որ ամենայն հավանականությամբ այդպիսիք պիտի գտնվեն: Այս նկատառումով էլ հանդեսը երևան է հանում 17-րդ դարի հեղինակ Ջաքարիա Մարգար Խոճենց Երևանցու «Վարդ և Սոխակ» ավանդավալը (աշխարհաբար թարգմանությամբ) և «Ֆարմանի Ասմանի» վիպաքերթվածը (հայերեն-ֆրանսերեն): Առաջինը՝ Վարդի և Սոխակի սիրո այլաբանական վիպերգումն է, երկրորդը՝ ասորական թագածառանգ Ճարմանի՝ պարսիկների դեմ տարած հաղթության, սիրո և ամուսնության պատմությունը:

1900 թ. 12-րդ համարից «Հայ էջեր» ընդհանուր տիտղոսով «Անահիտը» հրատարակում է միջնադարյան հայ տաղերգուների երգերը: Դրանք ընդօրինակված էին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան վանքերի գրադարաններից, Փարիզի Ազգային մատենադարանի և էջ Կիսմի վանքի ձեռագրերից: Բանաստեղծությունների մի մասը պատկանում են մեզ ծանոթ «...դիմակներին» Գր. Նարեկացուն, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիներին, Ն. Քուչակին, Ա. Սյունեցուն, Ե. Քեոմյուրճյանին, նաև՝ Սրիկ Կոստանդին, Ա. Բաղիջեցուն, Անտոն Դպիրին, Հովհ. Թյկուրանցուն և այլոց: Տաղերի մյուս մասը կրում է տաղասացի միայն անունը, ինչպես օրինակ, «Տաղ Հովհաննեսի վասն սիրո», «Տաղ Հովհանսանին ասացյալ», «Երգ Ջաքարիայի» և այլն: Երրորդ խմբի տաղերը, որոնք համեմատաբար քիչ թիվ են կազմում, ընդհանրապես հեղինակի անուն չեն կրում: Դրանցից, ամենայն հավանականությամբ, միայն երկուսն են ժողովրդական անանուն երգեր՝ «Տաղ խաչի ասա» և «Ողբ ի վերա մանկանց»:

«Հայ էջերը» աչքի է ընկնում թեմատիկ-ժանրային լայն բազմազանությամբ: Դրանք սիրո, ուրախության, պանդխտության երգեր են, միստիկական քերթվածներ, մահվան ու հանդերձյալ կյանքի պատկերներ, իմաստասիրական, բարոյախրատական ոտանավորներ, պատմական ողբեր և վիպական պատմություններ: Բոլորն էլ հայ մտքի և հայ զգայնության արտահայտություններ են, «հայկական բանաստեղծության էջեր»:

«Անահիտի» «Հայ էջերի» հիմնական տրամադրությունը լուսավոր ու պայծառ զգացումն է: Դա մերթ մարդկային ներաշխարհի, հոգու երկվության փիլիսոփայական խոհ է (ինչպես Հովհ. Պլուզի տաղիկներում), մե՛րթ գարնան ու լույս-առավոտի «մեծ ավետիք» (Կ. Երզնկացի), Աստվածածնի «անապական» գեղեցկության տարփողում, որ խորքի մեջ կանացի հրապույրների երկրպագումն է, մե՛րթ Հովհանսանի և Թյկուրանցու զվարթ սիրերգություն կամ քուչակյան պարզ ու խորունկ, անասմանորեն անկեղծ սեր, «հողեղեն լուսնի» հիացում, մե՛րթ էլ «սիրական» ջրի գովք, որ և՛ «նազով ճեմական», «մանեման» քայլող սեր-կինն է, և՛ կյանքի աղբյուրը, և՛ բնության զարդը.

**Ա՛յ ջուր բարերար պապելոց արքման...**

**Ջայնիդ եմ փափաք տեսույդ կու բաղձամ.**

**Քու անուշ խոսիցդ արտիկս է դողմամ,**

**Դու ճեմես ճոճաս ի նազ սիզական,**

**Ես կարոտ մնամ ի քո տեսության:**

(Ե. Քեոմյուրճյան, «Ի վերա ջրո»)

«Անահիտ» էջերում սիրո, բնության և ուրախության այս դրվատունը արդյունք էր որոշակի գաղափարական դիրքորոշման: Այդ մասին ավելի քան սպառիչ է Չոպանյանի բացատրությունը. «Մեր խեղճ ժողովորդը իր սուգին ու անձկությանը մեջ, անհուճապես պետք ունի մաքուր, կազդուրիչ; Գորգիչ Ավագներու» (1899, թիվ 12, էջ 369):

Հատկանշական է, որ հանդեսի էջերում նույն հարաբերության մեջ են դիտարկվում հայ և համաշխարհային գրականության արժեքները: Խճողին այստեղ հայ գրականության ինքնահատուկ նկարագրի և ազգային բնույթի հավաստունը չէր միայն: «Անահիտ» հանդեսը որոշակիորեն միտում էր հայ գեղարվեստական մտքի հաշտությունները մրցության տառել համաշխարհային գրականության երևույթների հետ, ցույց տալ, որ դրանք բովանդակությունների նույնատիպ արժեքներին: Այսպես օրինակ, 1905 թ. 5-րդ համարում հանդեսը թարգմանաբար տպագրում է ֆրանսիական վերածննդի բանաստեղծ (16-րդ դար) Ռենմի Պելլոյի «Ապրիլ, պարծանք անտառներու...» սկսվածքով բանաստեղծությունը: Չոպանյանի վկայությամբ, այս քերթվածը իբրև առաջնակարգ էջ տեղ է գտել ֆրանսիական պոեզիայի բոլոր հատընտիր ժողովածուներում: «Անահիտ» այն համեմատում է Կ. Երզնկացու «Գարուն» բանաստեղծության հետ, նկատում, որ ձևի կատարելությամբ թեև «Գարունը» գիջում է Պելլոյի երգին, սակայն, աերագանցում է «պատկերներու հարստությամբ, պարզությամբ, և հոգեկան խորունկ շունչով մը որ Պելլոյի մեջ կը պակսի» (1905, թիվ 5, էջ 95):

Այս տեսակետները հանդեսը հաստատում էր նաև եվրոպական քննադատության գրանահատումներով: Դրանք թարգմանաբար տպագրվում էին «Եվրոպական կարծիքը հայ գրականության մասին», «Հայ գրականությունը Եվրոպայի մեջ» և այլ խորագրերի տակ:

Այսպիսով, միջնադարյան հայ գրականության հարցերը քննության դնելով գեղագիտական նոր մեկնակետից, նորահայտ արժեքների հիմքի վրա «Անահիտ» հանդեսը մերժում էր անցյալի քննադատների կողմից ստված և գրական որոշ շրջաններում շարունակաբար կրկնվող այն կարծիքը, թե մեր հին մատենագրությունը մինչև 18-րդ դարի վերջը «տեսանի պահեալ զթերաշունչ կենդանություն» և ապա՝ «մնալ վայրենացալ մինչև ցկկզբն 18-րդ դարու»<sup>10</sup>, թե հայ գրականության զարգացումը ի սկզբանե առաջնորդվել է միայն դրացի ժողովորդների ավելի բարձր գրականության ազդեցություններով<sup>11</sup>:

«Հայ գրականության պատմության մեջ,— հայտարարում է «Անահիտը»,— այսուհետև պիտի ջնջենք այն տողերը որով մինչև ցարդ մեր հին գրականությունը կրոնս՝ և էջերու միօրինակ ու տխուր հավաքածու մը նկատելով... մեր նախնիքը դատապարտ ենք, եթե պարսիկները Հաֆլզն ունին ու Սաստին ու Քեյամը, մենք՝ պիտի կարենա հպարտությամբ ըսել՝ Քուչակն ունինք» (1902, թիվ 6, էջ 121):

Ժամանակի նորագույն գրական սերնդին «Անահիտը» խորհուրդ էր կարդում օգտվել միջնադարյան բանաստեղծական կոլտորայի հարուստ գանձարանից, յուրացնել հին մատենագրության թեմատիկ, ժանրային, գեղարվեստական պատկերավորման առանձնահատկությունները, արդի գրականությունը նորոգել հայ տղամիկ բանաստեղծության ավանդներով:

**Ю. С. АВЕТИСЯН**—Средневековая армянская литература в журнале «Анант». — Роль национального литературно-художественного журнала Аршака Чопаняна «Анант» исключительна в деле развития армянского искусства и литературы. На страницах журнала особое место занимают вопросы средневековой армянской литературы: печатаются фрагменты оригиналов рукописных книг, анализируется и оценивается литературное наследие ряда средневековых авторов. В отличие от других армянских периодических изданий того времени (которые имели преимущественно филологическую направленность), «Анант» прежде всего привлекал внимание к художественным достоинствам литературных образцов средневековья, раскрывал их историко-литературную значимость, подчеркивая благотворность их традиций для армянской литературы начала XX века. Журнал осуществлял новый подход к литературному наследию прошлого. Автор статьи исследует и оценивает эту сторону литературной политики журнала «Анант» первого периода издания (1898—1911 гг.).

<sup>10</sup> Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, վեց հատորով, հ. 2, Եր., 1980, էջ 95:

<sup>11</sup> Ա. Ալպտաճյան, Վաղվասի գրականությունը, Մասիս, Կ. Պոլիս, 1900, թիվ 35: Այս տեսակետն էին պաշտպանում մի խումբ արևմտահայ գրողներ ու հրատարակիչներ՝ Ա. Անտոնյան, Օտարին պատմաբան «Նույս», Կ. Պոլիս, 1908, թիվ 3, Ռ. Որբերյան, Մասիսի հարցարանին շուրջը, «Մասիս», Կ. Պոլիս, 1900, թիվ 318, ինչպես նաև՝ Մ. Դանիելյանը, Գ. Թանդեյանը և մի քանի այլ երկրորդական գրողներ: